

**ԹՆՕ-ների շրջանում տուբերկուլոզի սկրինինգային հետազոտությունների  
իրականացման ծառայություն  
Ամփոփիչ հաշվետվություն**

Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ ՅԿ-ը Թոքաբանության ազգային կենտրոնի հետ 2024 թվականի հուլիսի 18-ին կնքված թիվ ԹԱԿ-ԳՅԾՁԲ-24/41 պայմանագրի հիման վրա իրականացրել է «ԹՆՕ-ների շրջանում տուբերկուլոզի սկրինինգային հետազոտությունների իրականացման ծառայություն»: Ընդհանուր առմամբ մինչև դեկտեմբերի 15-ը անհարժեշտ էր ծառայություն տրամադրել 600 ԹՆՕ շահառուների Երևանում, Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում:

Իրականացվել են ՏԲ սքրինինգային միջոցառումներ Լոռու մարզում (2 օր, 153 շահառու), Գեղարքունիքի մարզում (2 օր, 116 շահառու), Շիրակի մարզում (2 օր, 61 շահառու) և Երևանում ԻԱԻՄ գրասենյակում (5 օր, 270 շահառու): Ընդհանուր առմամբ **11 օրում** ՏԲ սքրինինգային հետազոտություն են անցել **600 ԹՆՕ շահառուներ**, որոնց շրջանում CAD արհեստական բանականությամբ աշխատող սարքով ՏԲ սքրինինգի արդյունքում գրանցվել են բազմաթիվ առողջական խնդիրներ, որոնք պայամանավորված են եղել ներկա կամ նախկին ՏԲ հիվանդությամբ: Այն շահառուները, որոնք ԻԱԻՄ ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրի համար հանդիսացել են նոր շահառուներ, տեղում ստացել են նաև այդ ծառայությունը, որի արդյունքում բացահայտվել է 1 ՄԻԱՎ դրական դեպք, ով ողջեցրվել է ԻՋԱԿ, ստացել ախտորոշում և կցվել ՅԿ-ի բուժմանը: Շահառուն ընդգրկվել է նաև ՄԻԱՎ-ով ապրող անձանց խնամք և աջակցություն ծրագրում:

Իրականացված ՏԲ սքրինինգների ԹԱԿ բժիշկ-ճառագայթաբանների եզրակացությունների հիման վրա կարիք է **առաջացել ՏԲ նախնական դրական կասկածով 28 շահառուների** ուղղորդել ԹԱԿ կամ համապատասխան ՏԲ կաբինետներ:

Դեկտեմբերի 15-ի դրությամբ **կասկածելի դեպքերից 20-ը** ԻԱԻՄ ՅԿ-ի կողմից ուղղորդվել են և անցել են համապատասխան հետազոտություններ, որից **15-ը ԹԱԿ-ում, 5-ը` տարածքային պոլիկլինիկաներում**: Հետազոտված շահառուներից **1-ի մոտ հաստատվել է ՏԲ**, ով կցվել է բուժման, իսկ մյուս շահառուների հետազոտությունների և վերջնական արդյունքների մասին **դեռևս հստակ տեղեկատվություն չենք ստացել**: Հավելենք, որ որոշ հետազոտություններ դեռ ընթացքի մեջ են, և արդյունքները պարզ կլինեն ավելի ուշ: Լրացուցիչ հետազոտություններ անցած բոլոր 20 շահառուները ստացել են դրամական խրախուսումներ:

Զուղեգրված շահառուներից 1-ը գտնվում է տնային կալանքի տակ, որի մասին քննարկել ենք ԹԱԿ պատասխանատուի հետ և արդյունքում ԹԱԿ-ի կողմից տրամադրված բժշկական

եզրակացությունը փոխանցել ենք շահառուին՝ պրոբացիայի ծառայությանը ներկայացնելու համար:

Մյուս 7 շահառուներից մեկը գորակոչային տարիքի է, և հրաժարվել է գալ ԹԱԿ և անցնել մյուս հետազոտությունները, մյուս մեկ շահառուն անտուն է, աուբրիչը փորձում է կապի միջոց գտնել վերջինիս հետ, մնացած 5 շահառուները պատշաճ տեղեկացված են, մի քանի անգամ ստացել են համապատասխան խորհրդատվություն, շեշտադրվել է լրացուցիչ հետազոտությունների և վերջնական ախտորոշման կարևորությունները, սակայն այս պահին չեն ցանկացել հետազոտվել, խոստանալով առաջիկայում անցնել հետազոտություններ: Այնուամենայնիվ կազմակերպությունը և աուբրիչ աշխատակիցները կապի մեջ են շահառուների հետ:

Տեղեկացնենք, որ Մարտունի քաղաքում ՏԲ սքինիսզային հետազոտությանը ներկա է եղել և դիտարկում է կատարել նաև ԱՆ ԳՅ ներկայացուցիչը, ով կիսվել է իր դիտարկումներով և կարևորել ԹՆՕ-ների համար ՏԲ սքրինիզային ծառայության տրամադրումը և Ծրագրային թիմի, աուբրիչ աշխատակիցների արդյունավետ աշխատանքը: Մասնագետի առաջարկով հաջորդ այցին Շիրակի մարզ ներգրավվել է նաև ԻՅԱԿ շարժական կլինիկայով ծառայություն տրամադրող թիմը և տեղում իրականացրել նաև շահառուների շրջանում հեպատիտներ և սիֆիլիսի հետազոտություն:

Արդյունքում ԻՅԱԿ-ի թիմի կողմից հետազոտվել է 64 հոգի, արձանագրվել է 4 ՄԻԱԿ-ի (ԻՅԱԿ-ում հաշվառված), 5 հեպատիտ Բ-ի, 15 հեպատիտ Ց-ի (8 հոգուց է վերցվել փորձանմուշ) և 1 սիֆիլիսի վերաբերյալ դրական պատասխան: Հեպատիտ Ց-ի վերաբերյալ դրական ՊՇՌ մեթոդով հետազոտվել է ընդհանուր թվով 8 հոգի, որից 4-ի մոտ արդյունքը եղել է դրական:

Ընդհանուր առմամբ աշխատանքներն անցել են հարթ, բնականոն և թիրախային: Աշխատանքային միակ խոչընդոտը կապված է եղել հատկապես նախնական շրջանում CAD սարքավորման հասանելիության հետ, որը հետագայում կարգավորվեց ԹԱԿ-ի կողմից:

Հարկ է շեշտադրել, որ նման ծառայությունները շատ կարևոր են ԹՆՕ անձանց համար՝ որպես ՏԲ խոցելի խումբ, և կարևոր է ծառայությունների շարունակականությունը՝ հաշվի առնելով ԻԱԻՄ ՀԿ-ի և ԹԱԿ-ի արդյունավետ համագործակցությունը և կատարված թիրախային աշխատանքը: